ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 29.03.2017թ.-ի N 40 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

10.05.2017թ. ժամը $15^{00}$

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 29.03.2017թ.-ի N 40 - Լ հրամանի հիման վրա «Միփան» 220կՎ ՕԳ թիվ 1-87 մետաղական հենարանների ներկման աշխատանքների բաց ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ <<ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/09>>

Մասնակցում էին հանձնաժողովի՝

**Նախագահող՝**

Հարություն Գևորգյան — մատակարարման բաժնի պետ

**Անդամներ՝**

Վահե Յուզբաշյան — «Նախագիծ» մասնաճյուղի տնօրեն

Հարություն Գրիգորյան — կապիտալ շինարարության և շինվերանորոգման բաժնի պետ

**Քարտուղար՝**

Ռոմեն Ալբերտյան — մատակարարման բաժնի պետի տեղակալ

## I. Հայտի բացման մասին

---

(Հ.Գևորգյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց և որոշեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն՝ 10.05.2017թ., ժամը 14:30-ին , իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Այգեձորի 1-ին նրբ. 22շ. 53բն. , հեռ. 093 000 690
- «Առսարքտեխ» ՍՊԸ-ն՝ 10.05.2017թ., ժամը 14:53-ին , իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ուլնեցու փող. 1շ. 15բն. , հեռ. 093 939 410

2. Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարի կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում է մասնակիցների կողմից ներկայացրած հայտը:

2.1 «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.2 Հաշվի առնելով, որ «Առսարքտեխ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված 9-ը՝ Տուժանքի մասին համաձայնագիրը, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Առսարքտեխ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.4 «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի գնային առաջարկն է 55 416 600 ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

2.5 Մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.6 Գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին:

2.7 Հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեին 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

2.8 ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

2.9 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացություն ստանալու և «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հարություն Գևորգյան

Վահե Ցուզբաշյան

Հարություն Գրիգորյան

Ռուբեն Ալբերտյան